

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ԵՎ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության բաժինը (այսուհետ՝ բաժին) նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումն է:
2. Բաժնի կանոնադրությունը հաստատում է Արդարադատության նախարարը (այսուհետ՝ նախարար):
3. Բաժինը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, նախարարության և սույն կանոնադրությունների հիման վրա:

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿԸ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Բաժնի նպատակը խաղաղ ժամանակ զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և իրականացումն է:
5. Բաժնի խնդիրներն են՝
 - 1) զորահավաքային նախապատրաստության համակարգի ղեկավարումը.
 - 2) զորահավաքային նախապատրաստության ծրագրերի, պլանների մշակման աշխատանքների գիտամաթոդական, տեղեկատվական, մեթոդական ապահովումը.
 - 3) զորահավաքային նախապատրաստության պաշտպանական պատվերի (առաջադրանքի) կատարումն ապահովող միջոցառումների նախապատրաստումը.
 - 4) զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների կատարման, ուսումնական վարժանքների անցկացման կազմակերպումն ու իրականացումը.
 - 5) նախարարության զինապարտների հաշվառումը.
 - 6) քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմի քաղաքացիական պաշտպանության գծով պատրաստման կազմակերպումը.
 - 7) քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերվող հարցերի համակարգումը և միջոցառումների կազմակերպումը:

3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Բաժինն իր նպատակների և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները՝
 - 1) նախապատրաստում է նախարարի և գլխավոր քարտուղարի՝ զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության գծով հրամանների նախագծերը և դրանք ներկայացնում ստորագրման.

2) իրականացնում է նախարարի և գլխավոր քարտուղարի զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության գծով հրամանների մասին համապատասխան աշխատողներին տեղեկացնելու աշխատանքները.

3) իրականացնում է նախարարության զորահավաքային նախապատրաստության աշխատանքները.

4) իրականացնում է նախարարության զորահավաքային նախապատրաստության ծրագրերի, պլանների մշակման գիտամեթոդական, տեղեկատվական, մեթոդական և կազմակերպչական աշխատանքները.

5) իրականացնում է նախարարության ուսումնական վարժանքների անցկացման աշխատանքները.

6) սահմանված կարգով իրականացնում է նախարարության զինապարտների հաշվառումը և հատուկ զինվորական հաշվառման ենթակա պահեստազորայինների ամրագրման աշխատանքները.

7) իրականացնում է նախարարության քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքները.

8) առաջարկություններ է ներկայացնում նախարարության քաղաքացիական պաշտպանության զարգացման և այդ նպատակի համար ներդրումների, նյութատեխնիկական միջոցների և աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ.

9) իրականացնում է նախարարության ղեկավար կազմի քաղաքացիական պաշտպանության գծով պատրաստման աշխատանքները.

10) իրականացնում է նախարարության, նախարարությանը ենթակա մարմինների, նախարարության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կողմից քաղաքացիական պաշտպանության գծով պարտականությունների կատարման նկատմամբ հսկողության աշխատանքները:

4. ԲԱԺՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Բաժնի իրավասություններն են՝

1) առաջարկություններ ներկայացնել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.

2) համակարգել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ու քաղաքացիական պաշտպանության հետ կապված միջոցառումները:

5. ԲԱԺՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Նախարարը ղեկավարում է նախարարության գործունեությունը:

9. Բաժնի գործունեությունը համակարգում է նախարարի համապատասխան տեղակալը՝ իր համակարգման լիազորությունների շրջանակներում:

10. Բաժնի գործունեությունը վերահսկում է գլխավոր քարտուղարը:

11. Բաժինը գործում է բաժնի պետի անմիջական ղեկավարությամբ:

12. Բաժնի պետը անմիջական հաշվետու է նախարարի համապատասխան տեղակալին և գլխավոր քարտուղարին:

13. Բաժնի գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է նախարարը կամ նախարարի համապատասխան տեղակալը կամ գլխավոր քարտուղարը:

14. Բաժնի գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն բաժնի պետը կարող է ստորագրել անմիջական ղեկավարի հաճնարարությամբ կամ համաձայնությամբ:

